«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Խաղային գործունեության դերը նախադպրոցականի կյանքում

Հաստատություն՝ << Նորապատ գյուղի մանկապարտեզ >> ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Կարինե Գինոսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------էջ3
2. Խաղային գործունեության դերը նախադպրոցականի կյանքում-------էջ4
3. Երեխաների փոխհարաբերությունների ձեվավորումը խաղային գործունեության ընթացքում----------էջ10
4. Եզրակացություն----------էջ 17
5. Գրականության ցանկ----------էջ19

ՆԵՐԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: Կրթական համակարգի արդի փուլում կարևոր խնդիրներից է նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության զարգացումը, որի ընթացքում նրանց մոտ ձևավորվում է համատեղ գործելու և խաղալու, միմիանց կարծիքը հաշվի առնելու և սոցիալականացվելու հանգամանքով: Այս տեսանկյունից կարևորվում է նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեության ուսումնասիրումը:

Նախադպրոցական մանկավարժության զարգացման ընթացքում ուշադրության են արժանացել Ֆ.Ֆրյոբելի, Մ.Մոնտեսորիի և Է.Տիխեևայի դիդակտիկ խաղերի համակարգերը, որոնք արժանացել են համշխարհային գնահատման և կիրառվում են առ այսօր:

Հետևապես նախադպրոցական տարիքի երեխաների խաղային գործունեությունը ենթադրում է մանկավարժական պատշաճ աշխատանքի կազմակերպում:

Այստեղից էլ, հիմնավորվում է մեր կողմից առաջադրված թեմայի ընտրությունը և դրա ուսումնասիրության արդիականությունը:

Նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել նախադպրոցականի խաղային գործունեությունը և խաղերի միջոցով ձևավորել նրանց փոխհարաբերությունները:

Օգտակարությունը: Երեխան խաղի միջոցով ծանոթանում է մարդկանց հարաբերություններին, տարբեր մասնագիտություններին, իրեն փորձում սոցիալական տարբեր դերերում: երեխաների ճիշտ կազմակերպված խաղի ցուցիչ է նրանց լավ տրամադրությունը, ձեռք բերված հմտությունների բազմազան օգտագործումը և դրական հարաբերությունները: Հենց խաղի մեջ մեծերի հետ միասին երեխան ձեռք է բերում հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ օգտակար հմտություններ:

Խաղային գործունեությունը կիրառելիս հիմք եմ ընդունել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը:

Հետևել եմ, որ խաղերի ընթացքում երեխաները ձեռք բերեն հետևյալ կարողունակությունները՝ լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիավացիոն, ինքնաճանաչողական, ֆիզիկական կուլտուրայի և այլն, որոնց ընթացքում հասել եմ և դեռ կհասնենք որոշակի վերջնարդյունքի:

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Երեխաների խաղերը բազմազան են իրենց բովանդակությամբ, ինքնուրույնության աստիճանով, իրականության արտացոլման եղանակներով, կազմակերպման ձևերով, մանկավարժական արժեքով և այլ գործոններով: Գիտամանկավարժական գրականությանը հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ և մոտեցումներ: Օրինակ, Ֆ.Ֆրյոբելը կարևորում է խաղի մանկավարժական նշանակությունը, և խաղերը տարբերակում է իրենց մանկավարժական ուղղվածությամբ: Այսպես, նա առանձնացնում է *մտավոր խաղեր, սենսոր խաղեր, շարժախաղեր* և այլն:[1]

Կ.Գրոսը խաղը համարում է վարժանք, և այսպես կոչված խաղ-վարժությունները բաժանում է երկու խմբի՝ խաղ- վարժություններ՝ երեխայի կամային ուժերը զարգացնող և հիմնական բնազդները կատարելագործող խաղեր:

Հետաքրքիր է Պ.Ֆ.Լեսգաֆտի՝ խաղերի դասակարգման մոտեցումը: Նա խաղը համարում է արտաքին աշխարհի տպավորությունների արտացոլման և իմաստավորման միջոց և գտնում, որ գոյություն ունի արտաքին աշխարհի արտացոլման և իմաստավորման երկու եղանակ: Առաջին եղանակը՝ իմիտացիան է, կրկնօրինակող (իմիտացիոն) բնույթի խաղերը, որոնք ինքնուրույն են և գրեթե չեն սահմանափակում երեխայի գործունեությունը, մյուս եղանակը՝ շարժումն է, հատուկ կազմակերպվող շարժախաղերը, որոնք ունեն ամրագրված կանոններ, այսինքն սահմանափակումներ:[1]

Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով դրանք երկու խմբի՝ *ստեղծագործական և կանոնով*: Ստեղծագործական խաղերը բնորոշվում են ստեղծագործական բնույթով և ներքին «թաքնված» կանոններով: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է և սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող և զարգացնող են: [1]

Վերջին տարիներին խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս.Լ.Նովոսելովան, որի հիմքում ընկած է խաղային գործունեության նախաձեռնությունը: Հեղինակն առանձնացնում է խաղերի երեք խումբ.

- *խաղեր,* որոնց նախաձեռնողը երեխաներն են, դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ, սյուժետադերային խաղերը, խաղ-թատերացումները, խաղ-փորձարկումները;

- *խաղեր*, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Օրինակ, ուսուցանող և ինտելեկտուալ խաղերը, շարժախաղերը, խաղ-զվարճանքները;

- *ժողովրդական խաղեր*, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ:

Մանկավարժության մեջ գոյություն ունեն մանկական խաղերի մի շարք դասակարգումներ: Փորձենք նկարագրել դրանք:

Կ. Դ. Ուշակովան առաջադրել է խաղերի հետևյալ դասակարգումը. *կանոններով խաղեր, ազգային խաղեր, դաստիարակչական խաղեր*:

Նախադպրոցական մանկավարժության մեջ կիրառվում են մի քանի դասակարգումներ.

1. բաց կանոններով խաղեր /դիդակտիկ, շարժախաղեր, խաղ – զվարճանքներ/, որոնք ստեղծել են մեծահասակները երեխաների համար: Փակ կանոններով խաղերի /ստեղծագործական խաղերի/ հեղինակները երեխաներն են:
2. Ն. Միխայլենկոն, Ի. Կորոտկովան առաջադրել են խաղերի դասակարգում երեխաների գործունեության հաշվառմամբ. խաղեր, որոնք կիրառվում են պարապմունքների ընթացքում, խաղեր՝ պայմանավորված երեխաների ու մեծահասակների համատեղ գործունեությամբ և երեխաների նախաձեռնությամբ պայմանավորված խաղեր:
3. 20 – րդ դարի 90 – ական թթ. Ս. Լ. Նովոսելովան առաջադրել է դասախարգում՝ կապված խաղի նախաձեռնողից.
    a. խաղեր, որոնց նախաձեռնողները երեխաներն են /խաղ – թատերացումներ, սյուժետադերային խաղեր/,

b. խաղեր, որոնց նախաձեռնողները մեծահասակներն են /խաղ – զվարճանքներ, ուսուցողական խաղեր/,

c. ազգային խաղեր /ժամանցային, մարզախաղեր, ծիսական, արխաիկ/:

Տ. Ավդուլովան, վերլուծելով նախադպրոցականների խաղերը, առանձնացրել է դրանց տարատեսակները. *խաղ – դերեր, խաղ – հարաբերություններ, խաղ – գործողություններ*: Նա նաև խոսել է խաղերի խախտման մասին արդի նախադպրոցականների շրջանում՝ նշելով, որ դրանք կորցրել են իրենց ավանդական նշանակությունը՝ հնարավոր է օբյեկտիվ պատճառներից ելնելով:

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս.Ա.Կոզլովայի և Տ.Ա.Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասակարգման եղանակը, որի հիմքում ընկած է խորհրդային մանկավարժության մոտեցումը: Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով: Առաջին խմբին դասվում են.

- *սյուժետա-դերային խաղերը,*
- *խաղ-թատերացումները,*
- *կառուցողական խաղերը,*
- *ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները*:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները:[3] Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Երեխաների խաղային մտահղացումն իրականացվում է դերային փոխակերպման եղանակով: Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը, սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական

«ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում:[3]

Խաղերի երկրոդ խումբն են կազմում կանոնով խաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն:[2] Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները:

Փորձենք խաղերի տեսակները ներկայացնել աղյուսակի տեսքով.

Խաղի կառուցման եղանակների ուսուցումն՝ ուղղված խաղային կարողությունների ձևավորմանը, ենթադրում է նպատակային մանկավարժական աշխատանք երեք փուլով: [2]

Առաջին փուլում երեխաները մեծահասակների հետ համատեղ խաղում սովորում են հաջորդաբար կատարել առարկայա-խաղային գործողություններ, օգտագործելով համապատասխան խաղալիքներ և առարկաներ: Երկրորդ փուլում երեխաները սովորում են կատարել խաղային դերին համապատասխանող գործողություններ, ինչը նպաստում է դերային վարքագծի առանձնահատկությունների յուրացմանը: Երրորդ փուլում երեխաները մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում սովորում են կառուցել ամբողջական սյուժե, միավորելով սյուժեի առանձին մասերն ու դրվագները:

Ինչպես տեսնում ենք, առաջարկվում է, ըստ էության, սյուժետադերային խաղերի ուսուցման տարբերակ, որն առաջին հայացքից հակասում է ստեղծագործական խաղերի ղեկավարման հիմնական սկզբունքին: Կարծում ենք, որ էական է ոչ այնքան խաղերի ղեկավարման կազմակերպման եղանակը, որքան ղեկավարման աշխատանքի բնույթը, այսինքն, նույնիսկ նպատակային ուսուցման ընթացքում կարելի է ղեկավարել անուղղակի մեթոդներով և պահպանել երեխաների

ինքնուրույնությունն ու ստեղծագործական ձիրքը: Ղեկավարման նշված եղանակի արդյունավետությունն ակնհայտ է, այն, պարզապես, մանկավարժից պահանջում է գործիմաց մոտեցում և մանկավարժական վարպետություն:[3]

Սյուժետադերային խաղերի ղեկավարման նպատակաուղղվածությունը հնարավորություն է տալիս խաղի ընթացքում լուծելու մի շարք մանկավարժական խնդիրներ, որոնցից առավել կարևորվում է երեխաների փոխհարաբերությունների ձևավորումը: Համաձայն Ա.Պ.Ուսովայի հետազոտությունների տվյալների, երեխաների փոխհարաբերությունները խաղի ընթացքում անցնում են ձևավորման երկարատև ուղի: Երեխաների փոխհարաբերությունները խաղում կառուցվում և հաստատվում են աստիճանաբար, հաղթահարելով փոխհարաբերվելու տարաբնույթ դժվարություններ և անցնելով զարգացման որոշակի աստիճաններ: Փոխհարաբերությունների առաջին աստիճանն իրենից ներկայացնում է անկանոն կամ չձևավորված խաղային հարաբերությունների փուլ և բնութագրվում է երեխաների վարքի անկանոն և անկազմակերպ դրսևորումներով: Երեխաները ոչ միայն չեն փորձում համագործակցել, այլ միտված են խանգարելու միմյանց, խոչընդոտելու խաղը (խլում են քաղալիքները, հրմշտում իրար, դրսևորում են անկայուն հուզականություն): Փոխհարաբերությունների առաջին աստիճանը բնորոշ է 2¬3 տարեկան երեխաներին, որոնք նշված ձևով ուղղակի զբաղվում են և ուշադրություն գրավում, նրանք չունեն հաղորդակցման որևէ փորձ:[3] Փոխհարաբերությունների զարգացման հաջորդ աստիճանը բնութագրվում է միայնակ խաղերով: Սեկուսի խաղերի ընթացքում երեխաները չեն հաղորդակցվում, յուրաքանչյուրը տարված է իր խաղով, սակայն նրանք չեն էլ խանգարում միմյանց, հարկ եղած դեպքում կարող են, նույնիսկ, օգնել իրար: Ինքնուրույն ընթացող միայնակ խաղը՝ համատեղ խաղերի առաջին նախադրյալն է: Փոխհարաբերությունների զարգացման երրորդ փուլում ի հայտ են գալիս «կողք-կողքի» խաղերը, դրանք տարբերվում են նրանով, որ նույն խաղային տարածքում (սեղանի շուրջ, գորգի վրա) ծավալվում են ինքնուրույն խաղեր, որոնք ընթանալով առանձին՝ միտված են միավորվելու: Երեխաները ոչ միայն օգնում են միմյանց, այլև հարկ եղած դեպքում պատրաստ են խորհուրդ տալու, հուշելու, զիջելու որևէ խաղանյութ, կարող են, նույնիսկ, հնչել միավորման զգույշ առաջարկներ: «Կողք-կողքի» խաղերում ստեղծվում են բնական պայմաններ կողք կողքի խաղացող

երեխաների հաղորդակցման և ընդհանուր խաղային մտահղացման շուրջ միավորման համար:[4] Երեխաների առաջին միավորումը տեղի է ունենում ընդհանուր խաղային տարածքում: Չորրորդ փուլը՝ կարճատև հաղորդակցման փուլն է, որը բնութագրվում է խաղի շուրջ հաղորդակցվելու և փոխհարաբերվելու ցանկությամբ և անհրաժեշտությամբ: Երեխաների կողմից այն դրսևորվում է խաղային գործողությունները համադրելու, սյուժեն և խաղի ընթացքը բարձրաձայն քննարկելու և համագործակցության եզրեր փնտրելու ընդգծված ցանկությամբ: Այս փուլում արդեն ձևավորվում են որոշակի խաղային հարաբերություններ, որոնք հիմնականում ուղղված են խաղային պարտականությունների գիտակցմանը: Երեխան հասկանում է, որ խաղից դուրս գալ չի կարող, քանի որ իր պատճառով կարող է դադարել խաղը: Խաղային պարտականությունների գիտակցումը կայունացնում է երեխաների միավորումը և այն դառնում է ինքնանպատակ: Խաղային մտահղացումը կարող է ենթարկվել փոփոխության, կարող են վերաբաշխվել դերերը, սակայն անփոփոխ է մնում արդեն միավորված խաղացող երեխաների խումբը:[4]

Փոխհարաբերությունների ձևավորման հինգերորդ փուլը կարելի է անվանել երկարատև հաղորդակցման փուլ, որը բնութագրվում է ընդհանուր հետաքրքրության հիման վրա, խաղի բովանդակության շուրջ երեխաների միավորմամբ: Երեխաների հաղորդակցումը գիտակցված է, այն ուղղված է խաղի նպատակին ընդհանուր ուժերով հասնելուն՝ մտածված խաղային գործողությունների և համագործակցության միջոցով: Երեխաները բավական ինքնուրույն են և կազմակերպված, ընդունակ գնահատելու սեփական գործողությունները և խորհրդակցելու համատեղ խաղի շահերից ելնելով:[4]

Վեցերորդ աստիճանը՝ կայացած փոխհարաբերությունների փուլն է, այն բնութագրվում է հասակակիցների հետ մշտապես շփվելու, ընդհանուր խաղային մտահղացման շուրջ միավորվելու և համատեղ խաղի սյուժե կառուցելու ցանկությամբ ու պատրաստակամությամբ: Երեխաները հանուն խաղի, հանուն փոխպայմանավորված գործունեության պատրաստ են փոխզիջման, փոխօգնության և այլ դրական արարքների: Վեցերորդ աստիճանի փոխհարաբերությունները համարվում են ձևավորված, դրանք աստիճանաբար

կատարելագործվում և իմաստավորվում են երեխաների կողմից ու ակամայից փոխանցվում իրական կյանք:[4]

Սյուժետադերային խաղերի ընթացքում, երեխաների փոխհարաբերությունների ձևավորման գործում մեծ է մեծահասակի գրագետ մանկավարժական աշխատանքի դերը:

Նախադպրոցական մանկավարժության գիտահետազոտական ուսումնասիրությունների շարքում մշտապես արդիական է ստեղծագործական խաղերի ղեկավարման նոր ուղիների մշակման հիմնախնդիրը:[4]

ԵՐԵԽԱՆԵՐԻՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երեխաների խաղերը բազմազան են իրենց բովանդակությամբ, ինքնուրույնության աստիճանով, իրականության արտացոլման եղանակներով, կազմակերպման ձևերով, մանկավարժական արժեքով և այլ գործոններով: Գիտամանկավարժական գրականությանը հայտնի են խաղերի դասակարգման տարբեր եղանակներ և մոտեցումներ: Օրինակ, Ֆ.Ֆրյոբելը կարևորում է խաղի մանկավարժական նշանակությունը, և խաղերը տարբերակում է իրենց մանկավարժական ուղղվածությամբ: Այսպես, նա առանձնացնում է *մտավոր խաղեր, սենսոր խաղեր, շարժախաղեր* և այլն:[5]

Կ.Գրոսը խաղը համարում է վարժանք, և այսպես կոչված խաղ-վարժությունները բաժանում է երկու խմբի՝ խաղ- վարժություններ՝ երեխայի կամային ուժերը զարգացնող և հիմնական բնազդները կատարելագործող խաղեր:

Հետաքրքիր է Պ.Ֆ.Լեսգաֆտի՝ խաղերի դասակարգման մոտեցումը: Նա խաղը համարում է արտաքին աշխարհի տպավորությունների արտացոլման և

իմաստավորման միջոց և գտնում, որ գոյություն ունի արտաքին աշխարհի արտացոլման և իմաստավորման երկու եղանակ: Առաջին եղանակը՝ իմիտացիան է, կրկնօրինակող (իմիտացիոն) բնույթի խաղերը, որոնք ինքնուրույն են և գրեթե չեն սահմանափակում երեխայի գործունեությունը, մյուս եղանակը՝ շարժումն է, հատուկ կազմակերպվող շարժախաղերը, որոնք ունեն ամրագրված կանոններ, այսինքն սահմանափակումներ:[5]

Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով դրանք երկու խմբի՝ *ստեղծագործական և կանոնով*: Ստեղծագործական խաղերը բնորոշվում են ստեղծագործական բնույթով և ներքին «թաքնված» կանոններով: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է և սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող և զարգացնող են: [6]

Վերջին տարիներին խաղերի դասակարգման հետաքրքիր տարբերակ է առաջարկել ռուս մանկավարժ Ս.Լ.Նովոսելովան, որի հիմքում ընկած է խաղային գործունեության նախաձեռնությունը: Հեղինակն առանձնացնում է խաղերի երեք խումբ.

- *խաղեր,* որոնց նախաձեռնողը երեխաներն են, դրանք ինքնուրույն և ստեղծագործական բնույթի խաղեր են: Օրինակ, սյուժետադերային խաղերը, խաղ-թատերացումները, խաղ-փորձարկումները;

- *խաղեր*, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Օրինակ, ուսուցանող և ինտելեկտուալ խաղերը, շարժախաղերը, խաղ-զվարճանքները;

- *ժողովրդական խաղեր*, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ:

Մանկավարժության մեջ գոյություն ունեն մանկական խաղերի մի շարք դասակարգումներ: Փորձենք նկարագրել դրանք:

Կ. Դ. Ուշակովան առաջադրել է խաղերի հետևյալ դասակարգումը. *կանոններով խաղեր, ազգային խաղեր, դաստիարակչական խաղեր*:

Նախադպրոցական մանկավարժության մեջ կիրառվում են մի քանի դասակարգումներ.

4. բաց կանոններով խաղեր /դիդակտիկ, շարժախաղեր, խաղ – զվարճանքներ/, որոնք ստեղծել են մեծահասակները երեխաների համար:

Փակ կանոններով խաղերի /ստեղծագործական խաղերի/ հեղինակները երեխաներն են:

5. Ն. Միխայլենկոն, Ի. Կորոտկովան առաջադրել են խաղերի դասակարգում երեխաների գործունեության հաշվառմամբ. խաղեր, որոնք կիրառվում են պարապմունքների ընթացքում, խաղեր՝ պայմանավորված երեխաների ու մեծահասակների համատեղ գործունեությամբ և երեխաների նախաձեռնությամբ պայմանավորված խաղեր:
6. 20 – րդ դարի 90 – ական թթ. Ս. Լ. Նովոսելովան առաջադրել է դասախարգում՝ կապված խաղի նախաձեռնողից.
   d. խաղեր, որոնց նախաձեռնողները երեխաներն են /խաղ – թատերացումներ, սյուժետադերային խաղեր/,
   e. խաղեր, որոնց նախաձեռնողները մեծահասակներն են /խաղ – զվարճանքներ, ուսուցողական խաղեր/,
   f. ազգային խաղեր /ժամանցային, մարզախաղեր, ծիսական, արխաիկ/:

Տ. Ավդուլովան, վերլուծելով նախադպրոցականների խաղերը, առանձնացրել է դրանց տարատեսակները. *խաղ – դերեր, խաղ – հարաբերություններ, խաղ – գործողություններ*: Նա նաև խոսել է խաղերի խախտման մասին արդի նախադպրոցականների շրջանում՝ նշելով, որ դրանք կորցրել են իրենց ավանդական նշանակությունը՝ հնարավոր է օբյեկտիվ պատճառներից ելնելով:[7]

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն ընդունելի է համարում Ս.Ա.Կոզլովայի և Տ.Ա.Կուլիկովայի կողմից առաջարկված խաղերի դասակարգման եղանակը, որի հիմքում ընկած է խորհրդային մանկավարժության մոտեցումը: Խաղային գործունեությունն իր բնույթով լինում է ստեղծագործական և նպատակաուղղված զարգացնող կամ կանոնով: Առաջին խմբին դասվում են.

- *սյուժետա-դերային խաղերը,*
- *խաղ-թատերացումները,*
- *կառուցողական խաղերը,*
- *ռեժիսորական խաղերը և խաղ-երևակայությունները*:

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական

խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, դրսևորվում են «ազատության աստիճանները», ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Երեխաների խաղային մտահղացումն իրականացվում է դերային փոխակերպման եղանակով:[7]Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը, սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական «ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում:[7]

Խաղերի երկրոդ խումբն են կազմում կանոնով խաղերը, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները:[8]

Փորձենք խաղերի տեսակները ներկայացնել աղյուսակի տեսքով.

Խաղի կառուցման եղանակների ուսուցումն՝ ուղղված խաղային կարողությունների ձևավորմանը, ենթադրում է նպատակային մանկավարժական աշխատանք երեք փուլով:

Առաջին փուլում երեխաները մեծահասակների հետ համատեղ խաղում սովորում են հաջորդաբար կատարել առարկայա-խաղային գործողություններ, օգտագործելով համապատասխան խաղալիքներ և առարկաներ:[8] Երկրորդ փուլում երեխաները սովորում են կատարել խաղային դերին համապատասխանող գործողություններ, ինչը նպաստում է դերային վարքագծի

առանձնահատկությունների յուրացմանը: Երրորդ փուլում երեխաները մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում սովորում են կառուցել ամբողջական սյուժե, միավորելով սյուժեի առանձին մասերն ու դրվագները:[8]

Ինչպես տեսնում ենք, առաջարկվում է, ըստ էության, սյուժետադերային խաղերի ուսուցման տարբերակ, որն առաջին հայացքից հակասում է ստեղծագործական խաղերի ղեկավարման հիմնական սկզբունքին: Կարծում ենք, որ էական է ոչ այնքան խաղերի ղեկավարման կազմակերպման եղանակը, որքան ղեկավարման աշխատանքի բնույթը, այսինքն, նույնիսկ նպատակային ուսուցման ընթացքում կարելի է ղեկավարել անուղղակի մեթոդներով և պահպանել երեխաների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ձիրքը: Ղեկավարման նշված եղանակի արդյունավետությունն ակնհայտ է, այն, պարզապես, մանկավարժից պահանջում է գործիմաց մոտեցում և մանկավարժական վարպետություն:[8]

Սյուժետադերային խաղերի ղեկավարման նպատակաուղղվածությունը հնարավորություն է տալիս խաղի ընթացքում լուծելու մի շարք մանկավարժական խնդիրներ, որոնցից առավել կարևորվում է երեխաների փոխհարաբերությունների ձևավորումը: Համաձայն Ա.Պ.Ուսովայի հետազոտությունների տվյալների, երեխաների փոխհարաբերությունները խաղի ընթացքում անցնում են ձևավորման երկարատև ուղի: Երեխաների փոխհարաբերությունները խաղում կառուցվում և հաստատվում են աստիճանաբար, հաղթահարելով փոխհարաբերվելու տարաբնույթ դժվարություններ և անցնելով զարգացման որոշակի աստիճաններ:[8] Փոխհարաբերությունների առաջին աստիճանն իրենից ներկայացնում է անկանոն կամ չձևավորված խաղային հարաբերությունների փուլ և բնութագրվում է երեխաների վարքի անկանոն և անկազմակերպ դրսևորումներով: Երեխաները ոչ միայն չեն փորձում համագործակցել, այլ միտված են խանգարելու միմյանց, խոչընդոտելու խաղը (խլում են քաղալիքները, հրմշտում իրար, դրսևորում են անկայուն հուզականություն): Փոխհարաբերությունների առաջին աստիճանը բնորոշ է 2¬3 տարեկան երեխաներին, որոնք նշված ձևով ուղղակի զբաղվում են և ուշադրություն գրավում, նրանք չունեն հաղորդակցման որևէ փորձ:[8] Փոխհարաբերությունների զարգացման հաջորդ աստիճանը բնութագրվում է միայնակ խաղերով: Սեկուսի խաղերի ընթացքում երեխաները չեն հաղորդակցվում,

յուրաքանչյուրը տարված է իր խաղով, սակայն նրանք չեն էլ խանգարում միմյանց, հարկ եղած դեպքում կարող են, նույնիսկ, օգնել իրար: Ինքնուրույն ընթացող միայնակ խաղը՝ համատեղ խաղերի առաջին նախադրյալն է: Փոխհարաբերությունների զարգացման երրորդ փուլում ի հայտ են գալիս «կողք-կողքի» խաղերը, դրանք տարբերվում են նրանով, որ նույն խաղային տարածքում (սեղանի շուրջ, գորգի վրա) ծավալվում են ինքնուրույն խաղեր, որոնք ընթանալով առանձին՝ միտված են միավորվելու: [8] Երեխաները ոչ միայն օգնում են միմյանց, այլև հարկ եղած դեպքում պատրաստ են խորհուրդ տալու, հուշելու, զիջելու որևէ խաղանյութ, կարող են, նույնիսկ, հնչել միավորման զգույշ առաջարկներ: «Կողք-կողքի» խաղերում ստեղծվում են բնական պայմաններ կողք կողքի խաղացող երեխաների հաղորդակցման և ընդհանուր խաղային մտահղացման շուրջ միավորման համար: Երեխաների առաջին միավորումը տեղի է ունենում ընդհանուր խաղային տարածքում: Չորրորդ փուլը՝ կարճատև հաղորդակցման փուլն է, որը բնութագրվում է խաղի շուրջ հաղորդակցվելու և փոխհարաբերվելու ցանկությամբ և անհրաժեշտությամբ: Երեխաների կողմից այն դրսևորվում է խաղային գործողությունները համադրելու, սյուժեն և խաղի ընթացքը բարձրաձայն քննարկելու և համագործակցության եզրեր փնտրելու ընդգծված ցանկությամբ:[9] Այս փուլում արդեն ձևավորվում են որոշակի խաղային հարաբերություններ, որոնք հիմնականում ուղղված են խաղային պարտականությունների գիտակցմանը: Երեխան հասկանում է, որ խաղից դուրս գալ չի կարող, քանի որ իր պատճառով կարող է դադարել խաղը: Խաղային պարտականությունների գիտակցումը կայունացնում է երեխաների միավորումը և այն դառնում է ինքնանպատակ: Խաղային մտահղացումը կարող է ենթարկվել փոփոխության, կարող են վերաբաշխվել դերերը, սակայն անփոփոխ է մնում արդեն միավորված խաղացող երեխաների խումբը:[9]

Փոխհարաբերությունների ձևավորման հինգերորդ փուլը կարելի է անվանել երկարատև հաղորդակցման փուլ, որը բնութագրվում է ընդհանուր հետաքրքրության հիման վրա, խաղի բովանդակության շուրջ երեխաների միավորմամբ: Երեխաների հաղորդակցումը գիտակցված է, այն ուղղված է խաղի նպատակին ընդհանուր ուժերով հասնելուն՝ մտածված խաղային գործողությունների և համագործակցության միջոցով: Երեխաները բավական

ինքնուրույն են և կազմակերպված, ընդունակ գնահատելու սեփական գործողությունները և խորհրդակցելու համատեղ խաղի շահերից ելնելով:[9]

Վեցերորդ աստիճանը՝ կայացած փոխհարաբերությունների փուլն է, այն բնութագրվում է հասակակիցների հետ մշտապես շփվելու, ընդհանուր խաղային մտահղացման շուրջ միավորվելու և համատեղ խաղի սյուժե կառուցելու ցանկությամբ ու պատրաստակամությամբ: Երեխաները հանուն խաղի, հանուն փոխպայմանավորված գործունեության պատրաստ են փոխզիջման, փոխօգնության և այլ դրական արարքների: Վեցերորդ աստիճանի փոխհարաբերությունները համարվում են ձևավորված, դրանք աստիճանաբար կատարելագործվում և իմաստավորվում են երեխաների կողմից ու ակամայից փոխանցվում իրական կյանք:[9]

Սյուժետադերային խաղերի ընթացքում, երեխաների փոխհարաբերությունների ձևավորման գործում մեծ է մեծահասակի գրագետ մանկավարժական աշխատանքի դերը:

Նախադպրոցական մանկավարժության գիտահետազոտական ուսումնասիրությունների շարքում մշտապես արդիական է ստեղծագործական խաղերի ղեկավարման նոր ուղիների մշակման հիմնախնդիրը:[9]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական տարիքը երեխայի ակտիվ սոցիալականացման, մշակույթի մուտք գործելու, մեծահասակների և հասակակիցների հետ հաղորդակցության զարգացման, բարոյական և գեղագիտական զգացմունքների արթնացման, աշխարհի և մարդկային հարաբերությունների ակտիվ իմացության ժամանակաշրջան է: Մենք կարևոր դեր ենք խաղում նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական և անձնական զարգացման գործում և կարծում ենք, որ խաղի միջոցով հնարավոր է երեխային ապահովել աշխարհի հետ ներդաշնակ փոխազդեցություն,

Երբ երեխաները միասին խաղում են, հիմնական նպատակը գործընկերային հարաբերություններ հաստատելն է, հաղորդակցման հմտությունների զարգացումը, ինչպես իրականության, այնպես էլ այլ մարդկանց, և իրենց մասին համարժեք ընկալման ձևավորումը: Համատեղ խաղերը երեխային սովորեցնում են ուշադիր հետևել այլ երեխաների գործողություններին, կրկնել դրանք, լսել հասակակիցներին, համաձայնեցնել նրանց գործողությունները հասակակիցների գործողությունների հետ: Նման խաղերում երեխան սովորում է կառավարել իր էմոցիաները, մտնել տարբեր հարաբերությունների մեջ, ուշադիր և հետաքրքրությամբ լսել զրուցակցին, հարգանք ցուցաբերել խոսակցի նկատմամբ, համեմատել իր կարծիքը զրուցակցի կարծիքի հետ, համաձայնվել նրա հետ կամ առարկել, հարցնել կամ պատասխանել, հստակ և հետևողականորեն արտահայտել իր մտքերը, կողմնորոշվել շփման իրավիճակում, բանակցել, պլանավորել իրենց գործողությունները, զիջել: Պետք է երեխաներին ավելի շատ ազատություն տալ կազմակերպված խաղերում,.

Առաջարկում եմ նաև երեխաների համար խաղեր՝ իմպրովիզներ, հեքիաթներ և բաց ավարտով պատմություններ, որտեղ երեխաները կարող են ինքնուրույն խաղալ սյուժեն՝ առանց նախնական պատրաստության: Նման խաղերը պահանջում են երեխաներին համատեղ ընտրել թեմա, քննարկել, թե ինչպես այն պատկերել, ինչ դերեր են լինելու, բնորոշ դրվագներ: Երեխաների կողմից անկախ դերախաղը հնարավորություն է տալիս ձևավորել սոցիալական վարքագծի փորձ, սոցիալական նորմերին համապատասխան գործելու կարողություն, երեխաների մոտ ձևավորվում է պատասխանատվության զգացում մեկ այլ անձի համար, բանակցելու, նոր կապեր հաստատելու, հաշվի առնելու կարողություն: հասակակիցների կարծիքները, ցանկությունները և տեսակետները.

Առաջարկում եմ երեխաներին իմպրովիզներ անել կյանքից վերցված թեմաներով (զվարճալի դեպք, հետաքրքիր իրադարձություն, բարի գործեր), որոնց միջոցով երեխան զարգացնում է դրական վերաբերմունք իր, այլ մարդկանց, իրեն շրջապատող աշխարհի և երեխաների հաղորդակցական սոցիալական իրավասության նկատմամբ:

Հետևաբար, խաղերը չափազանց օգտակար և անհրաժեշտ են երեխայի համար իր զարգացման տարբեր փուլերում, զուգընկերոջ հետ համաձայնությամբ, որոշում են նրա տեղը գործողությունների հաջորդականության մեջ, կատարում են նրա գործողությունները ճիշտ ռիթմով և արագությամբ, ինչը զարգացնում է երեխաների կարողությունը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Турченко В. И. Дошкольная педагогика, -М.: 2014, с. 122 - 129
2. Короткова Н.- Современные исследования детской игры- Москва 1983
3. Пиаже Ж. Психология интеллекта - Избр. психол. труды - Москва с. 55—231
4. Эльконин Д. Психология игры — Москва:Влйдос, 1999г.__
5. Ալեքսանդրյան Է. Ա. Նախադպրոցական մանկավարժություն,դասագիրք, -Ե:1992, էջ 190 – 199
6. Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա. Մ. Նախադպրոցական մանկավարժություն, բուհական դասագիրք, -Ե:2005, էջ 216– 223
7. Мухина В. С. Возрастная психология, -М: 2004, с. 235 – 248
8. Немов Р. С. Психология, книга 2, -М: 2003, с. 436 – 439
9. Турченко В. И. Дошкольная педагогика, -М.: 2014